РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРАГАЦОТН
ОБЩИНА ШАМИРАМ

ARAGATSOTN REGION
SHAMIRAM
MUNICHIPALITY

Հ Հ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Моб / 093/434358 /
mraz.proyan@mail.ru

N 15 „25„ 04 „ 2012թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՄԱՀԱԿՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Շամիրամ համայնքի 27.03.2012թվականի նո-03 արտահերթ նիստի արձանագրության որոշումը առ դիր 2 թերթից :

ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Հ. ԲՐՈՅԱՆ

ՀՀ Արագ...
աշխատ...
«25» 04 2012թ.
Մուտք Դ/1846-12

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
# ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2012թ. N 2

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԸ ԵՎ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ՊԱՐՏՔԻ ԴԻՄԱՑ ՕՏԱՐՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ԲՐՈՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 1-ին մասին 12-րդ կետին համապատասխան, համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին համայնքի սեփականություն հանդիսացող 41 մլն. դրամ գնահատված շուկայական արժեքով 626.6 քառ. մետր մակերեսով գյուղապետարանի շենքը, 75.5 քառ. մետր մակերեսով արհեստանոցը, 20.8 քառ. մետր մակերեսով շինությունը, ինչպես նաև դրա սպասարկման և օգտագործման համար անհրաժեշտ 3670 քառ. մետր մակերեսով հողատարածքը (սեփականության վկայական՝ N 2396567, այսուհետ՝ գույք) հանձնելու Հայաստանի Հանրապետությանը՝ ներհամայնքային ոռոգման ցանցի հիմնանորոգման համաֆինանսավորման պարտավորության դիմաց, ինչը կազմում է 19626000 Հ Հ դրամ, հետագայում գույքը «Շամիրամի Ոսկեբ-Բեկի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով ամրացնելու պայմանով:
2. Համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին՝ «Գույքը Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին» Հ Հ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկշաբաթյա ժամկետում համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում կատարել համապատասխան փոփոխություն և ներկայացնել ավագանու հաստատմա

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Արեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2012թ. Մարտի 27

գ. Շամիրամ